ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԱՊՇԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

12.01.2017 18:05

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը դիմել է Բելառուսի Հանրապետության փաստաբանների հանրապետական կոլեգիայի նախագահ Վ. Չայչիցին և Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի նախագահ Յու.Պիլիպենկոյին՝ խնդրելով իրավական գնահատական տալ Ալեքսանդր Լապշինի հետ կապված իրադարձությանը և օժանդակել վերջինիս իրավաբանական օգնության հարցում:

Փաստաբանների պալատը 2016թ. դեկտեմբերի 29-ին ձևավորել էր մասնագիտական աշխատանքային խումբ՝ փաստաբաններ Սիմոն Բաբայանի, Էմիլ Ամիրխանյանի, Տարոն Սիմոնյանի և Արայիկ Ղազարյանի կազմով: Մասնագիտական խումբը գտել է, որ Ալեքսանդր Լապշինի հանձնումը Ադրբեջանական Հանրապետության գլխավոր դատախազի պահանջով անթույլատրելի է, քանի որ այն հակասում է միջազգային և Բելառուսի ներպետական իրավական ակտերի պահանջներին:

Հիշեցնենք, որ ՌԴ քաղաքացի Ալեքսանդր Լապշինը հանձնման նպատակով Բելառուսի Հանրապետությունում կալանավորվել է Ադրբեջանի պահանջով, քանի որ 2011թ. ապրիլին և 2012թ. հոկտեմբերին այցելել էր Լեռնային Ղարաբաղ և այցերի մասին գրառումներ էր կատարել իր բլոգում: Ադրբեջանական դատախազությունը քրեական գործ էր հարուցել՝ տեղի քրեական օրենսգրքի 281.2 և 318.2 հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով, այն է՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ոտնահարման հրապարակային կոչեր անելը և երկրի քաղաքական սահմանը հատելիս անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի գրությունը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
մամուլի ծառայություն

Առաջարկվող նորություններ

17.01.2017ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԱՊՇԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })